



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին Գործոց Նախարարութեան
Սահմանադրութեան Գրքի 1-2017.06.13 արձանագրութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի
Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) իրաւաբանական
յանձնաժողովի որոշումներ (ա)

Presidential Council of the Republic of Western Armenia

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին Գործոց Նախարարութեան
թիւ 1-2017.06.13 արձանագրութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի
Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) իրաւաբանական
յանձնաժողովի որոշումներ (ա)

Երեւան, Յունիսի 13, 2017 թուական

Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին գործոց
Նախարարութեան հետազոտութիւններուն,

- Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին,
- Նկատի ունենալով, Յունուարի 10 2017 թվագրուած Հանրապետութեան Նախագահին ուղղուած նամակը, ըստ որում ԱՀՀ Կառավարութեան վարչապետը ներկայացուցած է իր հրաժարականը,
- Հաշվի առնելով նաեւ, Յունուարի 12 2017 թուագրուած նամակը ⁽¹⁾, ըստ որում վարչապետը կը բերէ որոշ լրացուցիչ բացատրութիւններ իր հրաժարականի դիմումին վերաբերեալ,

Նախագահի թիւ 42 ⁽²⁾ (Յունիսի 5, 2017) հրամանգիարով՝ Վարչապետ Տիգրան Փաշաբեզեանի պաշտօնազրկումէն յետոյ, Յունիսի 11-12, 2017-ին, խումբ մը մարդկանց (խորհրդարանի անդամներու եւ ոչ անդամներու) մօտ գաղափար յառաջացաւ՝ փորձել տապալել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը, որու ռազմական ուժերը ներկայիս կը գործեն Դէյր-Զօրի մէջ:

Այդ պատճառով ալ՝ Նախագահ Արմենակ Աբրահամեանը մէկ օր առաջ Յունիսի 10-ին յայտարարեց ⁽³⁾, որ այդ ժողովի կազմակերպումը չի համապատասխաներ սահմանադրութեան ընթացակարգին, եւ խորհուրդ տուաւ Խորհրդարանի պատգամաւորներուն՝ չմասնակցիլ այդ ժողովին:

¹ http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/2017/Hrajaragan_namag_Vartchabed_Tigran_Pashabezyan-10.01.2017.pdf

² http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/2017/Hramanaqir_N42-Vartchabedi_Hrajaragan-31.05.2017.pdf

³ [AHH Nakhaqahi Haydararutyun](http://www.western-armenia.eu/stat.gov.wa/arm/2017/Hramanaqir_N42-Vartchabedi_Hrajaragan-31.05.2017.pdf)

Միայն սահմանափակ խումբ մը մարդիկ մասնակցեր են այդ ժողովին, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախկին անդամներ եւ ոչ անդամներ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ՝ Արմէն Տէր Սարգսեանի նախագահութեամբ, որ տեղի ունեցեր է Նոյեան Տապանի տեղեկատուական ցանցի տարածքին մէջ ժամը 13:00 -էն մինչև 15:00, տեղի ունեցեր է վիդէօ-կոնֆերանս, որ ղեկավարուեր է Տիգրան Հարութիւնեանի կողմէ, եւ նախկին Վարչապետ Տիգրան Փաշարեզեանի մասնակցութեամբ:

Ըստ իրենց կողմէ համացանցի մէջ տարածուած տեղեկատուութեան ⁽⁴⁾, 64 պատգամաւորներէն իբրեւ թէ գրանցուած են 51-ը, որոնցմէ սրահին մէջ ներկայ եղած են 7-ն, իսկ մնացած 44-ը իբրեւ թէ մասնակցած են համացանցի միջոցով, եւ որ նորէն իբրեւ թէ կազմած է անհրաժեշտ քուորումի 80 տոկոսը (ըստ իրենց հաղորդագրութեան):

Քննարկումներէն ետք Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանին նկատմամբ ներկայացուած 5 մեղադրանքներէն յետոյ, անոր պաշտօնազրկումի հարցը քուէարկութեան դրուած է Սկայպով եւ Սկայպէն դուրս, հեռախոսային բերանացի զանգերով արանց ուել գրաւոր փաստացի հաստատումներու:

Ստորեւ նշուած են ներկայացուած 5 մեղադրանքներուն արձանագրութիւնները եւ Հրատարակուած են քուէարկության հետեւեալ արդիւնքները.
44 կողմ - 0 դեմ - 7 ձեռնպահ (քուէարկութեան արդիւնքներու անուանացանկ չներկայացնելով):

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) իրաւաբանական յանձնաժողովի որոշումները.

- **Համաձայն** Յօդուած 90, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան՝ որ ընդունուած է Մայիս 9, 2016-ին (մեկ տարի եւ մեկ ամիս է ի վեր), համատեղ՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդարանի անդամներու, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վառավարութեան անդամներուն եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ներկայ պատգամաւորներուն կողմէն:
- **Հաջուի առնելով**, որ այս ժողովի կազմակերպումն ու օրակարգի որոշումը տեղի ունեցած է առանց Արեւմտեան Հայաստանի Նախագահին եւ Վառավարութեան անդամներուն հետ նախօրոք համաձայնեցնելու,

⁴ WG: +Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 5-րդ Ստաշոբանի 1-ին նիստի արձանագրութիւն - 11.06.2017 - <http://nt.am/am/news/240077/>

- **Հաշուի առնելով**, ժողովի ընթացքին ներկայացուած 5 անհիմն մեղադրանքները Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահին նկատմամբ,
- **Նկատի ունենալով**, որ քուէարկողներու մեկ մասը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ չեն,
- **Նկատի ունենալով**, որ քուէարկողներու մեկ մասը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Խորհրդարանի պատգամաւորներ չեն,
- **Հաշուի առնելով**, որ քուէարկողներու մեկ մասը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Խորհրդարանի Նախագահին կողմէ նշանակուած անձեր են եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Խորհրդարանի պատգամաւորներ չեն,
- **Հաշուի առնելով**, որ քուէարկութիւնը տեղի ունեցած է զարտուղի ճանապարհով, ձայներու բնորոշ չարաշահութեամբ եւ առանց գրաւոր գործընթացի,
- **Նկատի ունենալով** ընտրութեան գործընթացի անկանոնութիւնը, նաեւ շեշտելով որ տուեալ ժողովի ոչ մեկ գործառք չէ յենված կամ հղում չէ նշուած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան որեւէ յօդուածի վրայ:
- **Հաշուի առնելով** Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի պաշտօնանկութեան անօրինական ըլլալը

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին գործերու Նախարարութեան արձանագրութեաններուն հիման վրայ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Իրաւաբանական յանձնաժողովը այսօր կ'որոշէ հետեւեալը.

Ա) Այն անձինք, ովքեր մասնակցած են ժողովին և իրենց ձայնը տուած են ի նպաստ Արմենակ Աբրահամեանի պաշտօնազրկումին, անոնք զրկուած են Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) անդամակցութենէն առանց բողոքարկելու իրաւունքի, համաձայն ԱՀՀ Սահմանադրութեան Յօդուած 90 եւ ԱՀՀ ԱԺ Յունիս 13 2017թ. նիստի որոշումներուն: Ուստի անոնք իրաւունք չունին հանդես գալու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) անունով:

Սոյն աձերն են.

- Արմէն Տէր-Սարգսեան

- Արմենակ Հարմանդայեան
- Տիգրան Հարությունեան (Նոյեան Տապանի տեղեկատուական ցանցի տնօրէն)
- Մամուէլ Միւրեան
- Սաիդա Օհանեան
- Հայկ Ղազարեան
- Վարդան Կալամկերեան
- Հայկ Յարութիւնեան
- Վաղարշակ Սազերտեանց

Բ) Իսկ այն անձինք, ովքեր մասնակցած են ժողովին և իրենց ձայնը տուած են ի նպաստ Արմենակ Աբրահամեանի պաշտօնազրկումին, և տակաւին կը պնդեն, համագործակցիլ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան կամ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին (Խորհրդարանին) հետ՝ անոնք եւս զրկուած են Արեւմտեան Հայաստանի ուրիշ պետական կառոյցի հետ ուրիշ աշխատանքային գործարք ունենալու իրաւունքէն, առանց բողոքարկելու իրաւունքի:

Սոյն ատեն են.

- Էդուարդ Պոլատով
- Աշօտ Կազանջեան
- Դիանա Գրիգորեան
- Դաւիթ Խիւնտեւ
- Ռադիկ Խամոյան

Գ) Նաեւ անոնք որոնք մասնակցած են ժողովին՝ իրենց ձայնը տալով ի նպաստ Արմենակ Աբրահամեանի պաշտօնազրկումին, եւ տակաւին կը պնդեն, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան անդամներ են՝ հեռացուած են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան բոլոր պետական կառոյցներէն առանց բողոքարկելու իրաւունքի, եւ իրաւունք չունին հանդես գալու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան կամ Արեւմտեան Հայաստանի ուրիշ կառոյցի անունով:

Սոյն ատեն են.

- Տիգրան Փաշաբեգեան
- Պետրոս Քեշիշօղլեան
- Վրէժ Քոսեյան

Վերոյիշեալ ցանկերը սպառիչ չեն, քանզի անոնք մշակուած են ներկայի նախնական տուեալներով:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին Գործոց Նախարարութեան արձանագրութիւններու հիման վրայ, Արեւմտեան Հաստատանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Իրաւաբանական յանձնաժողովը նաեւ կ'որոշէ հետեւեալը.

- ա) 2017 թուականի Յունիսի 11-ին տեղի ունեցած ժողովը ապօրինի, անօրինական եւ անվաւեր է: Նաեւ բացայայտ՝ ձեւական եւ իրաւական խախտում է ԱՀՀ Սահմանադրութեան յօդուածներու բովանդակութեան:
- բ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Արմենակ Աբրահամեանի նկատամբ ներկայացուած մեղադրանքները անվաւեր են:
- գ) Ժողովի ընթացքին ընդունուած բոլոր որոշումները անիրական եւ անվաւեր են:
- դ) Օրինական է և ի գօրու ընդունիլ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահին կողմէ ներկայացուած դիմումը՝ իր և Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կրած վնասներու փոխյատուցումներու մասին:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Իրաւաբանական յանձնաժողովի անդամներ,

Աղվան Տոնականեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Համբար Գայաեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Վարդան Մանջիկեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Վիոլետա Ղազարոսեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Ժորժ Մելկոն ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Արմեն Տոնոյան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Բեատրիս Նազարեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Հրաչ Շիրինյան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Տիգրան Բաբայան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Լիտիա Մարկոսեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Վրէժ Աբրահամեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Արծիւ Սարգիսեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Ժան Ղազարոսեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	Ժիրայր Պալեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր
Սարգիս Գասպարեան ԱՀՀԱԺ-ի պատգամաւոր	

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան ներկայ անդամներ,

Գառնիկ Սարգիսեան	Նազելի Մարգարեան
Մարտիրոս Շահբազեան	Պետրոս Հաճեան
Յովսէփ Ղազարեան	Սիմոն Դարոնեան
Բենիամին Յովհանիսեան	Կարո Արմենեան
Մովսէս Նաճարեան	

Երեւան, Յունիսի 13, 2017 թուական

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ
Արմենակ Աբրահամեան**

stat.gov.wa@haybachdban.org